ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1538-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2022.10.03-2022.10.16 Պաշտոնական հրապարակման օրը 06.10.2022	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	06.10.2022
Ստորագրող մարմինը	ՀՀ փոխվարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	06.10.2022
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	07.10.2022	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԲՆԱԻՐԱՅԻՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2022 թվականի N 1538-Ն

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԲՆԱԻՐԱՅԻՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2.2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատություններում, որակի նվազագույն չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ **Մ. Գրիգորյան**

Երևան

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1538-Ն որոշման

ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԲՆԱՒՐԱՅԻՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանված՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, որակի չափորոշիչները հանդիսանում են նվազագույն: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարան տրամադրող, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնություն և խնամք տրամադրող հաստատությունները և կազմակերպությունները կարող են լավարկել այն չափորոշիչները, որոնցով տրամադրելու են համապատասխան ծառայությունները կամ ներկայացնել առավել բարելավված պայմաններ:

2. Սույն հավելվածի 1-ին կետում նշված ծառայությունների չափորոշիչները ներկայացվում են ըստ ծառայությունների տեսակների:

3. Սույն հավելվածով նախատեսված ծառայությունները տրամադրելիս անհրաժեշտ է ապահովել հետևյալ պայմանները՝

1) խտրականության բացառում.

2) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի անվտանգության ու արդար վերաբերմունքի ապահովում.

3) արդարադատության հասանելիություն և հայցային պահանջ ներկայացնելուն չխոչընդոտում.

4) վերաինտեգրման ապահովում.

5) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի անձնական կյանքի գաղտնիության ապահովում.

6) հատուկ կատեգորիայի երեխա զոհի լավագույն շահի ապահովում.

7) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի և հատուկ կատեգորիայի զոհի կարծիքը հաշվի առնելը (հատուկ կատեգորիայի զոհերի կարծիքը հաշվի է առնվում նրանց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան):

4. Սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված պայմաններն անվերապահորեն կիրառելի են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման բոլոր զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի նկատմամբ:

2. ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

5. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարան տրամադրվում է միայն դրա անհրաժեշտության դեպքում՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի գրավոր համաձայնությամբ: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հատուկ կատեգորիայի զոհի փոխարեն համաձայնությունը տրվում է նրա ծնողի, օրինական ներկայացուցչի, խնամակալի կամ նման համաձայնություն տալու իրավունք ունեցող այլ անձի կողմից:

6. Կացարանը պետք է համապատասխանի հակահրդեհային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անվտանգության այլ կանոններին:

7. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարան տրամադրելու նախապայմաններն են՝

1) անվտանգության ապահովումը՝ ներառյալ կացարանն անվտանգության համակարգով կահավորելը, տեսախցիկները և կացարանում անհատական պաշտպանության միջոցների (աերոզոլային սարքեր, ազդարարման համակարգ և այլն) առկայությունը: Արգելվում է տեսախցիկներ տեղադրել բնակելի սենյակում և սանհանգույցում.

2) գաղտնիությունը՝ ներառյալ կացարանի գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը չհրապարակելը:

8. Կացարանի տրամադրումը չի պարտավորեցնում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին ստանալ բոլոր ծառայությունները, որոնք տրամադրվում են կացարանում: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կոնկրետ զոհին և հատուկ կատեգորիայի զոհին՝ կացարանում տրամադրվող ծառայությունները պետք է հիմնվեն նրա կարիքների գնահատման վրա:

9. Կացարանում համակեցության կանոնների պահպանումը և կացարանում գտնվող այլ անձանց իրավունքները և

ազատությունները հարգելն ու չոտնահարելը պարտադիր է: Կացարանում համակեցության կանոնների պահպանման կամ կացարանում գտնվող այլ անձի իրավունքները և ազատությունները հարգելու ու չոտնահարելու նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կացարան տրամադրող կազմակերպությունը կամ հաստատությունը:

10. Կացարանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի ընդունելությունն իրականացվում է շուրջօրյա՝ կացարանի հերթապահի կողմից: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հատուկ կատեգորիայի երեխա զոհերն ընդունվում են իրենց օրինական ներկայացուցչի հետ, եթե այդպիսին կա, և եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահին, իսկ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերն ընդունվում են իրենց խնամքի տակ գտնվող երեխաների հետ միասին: Եթե մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի խնամքի տակ գտնվող երեխան 12 տարեկանից բարձր է, ապա զոհն իր երեխայի հետ համատեղ կացարանում տեղավորվում է այնպես, որպեսզի բացառվի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման այլ զոհերի կամ հատուկ կատեգորիայի զոհերի հետ շփումը, բացառությամբ այն դեպքերի, եթե այդ շփումը բխում է երեխայի լավագույն շահից: Եթե մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհը գտնվում է ծանր հոգեբանական վիճակում, ապա նրա խնամքի տակ գտնվող երեխան նրա հետ միասին ընդունվում է կացարան, եթե դա բխում է երեխայի լավագույն շահից կամ մինչև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի ծանր հոգեբանական վիճակի բարելավումը նրա և երեխայի շփումը կազմակերպվում է սոցիալական աշխատողի կամ հոգեբանի ներկայությամբ:

11. Կացարանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին ընդունում են անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ առանց դրա՝ նշում կատարելով այլ փաստաթղթերից մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը և այլ տվյալներ, որոնք հայտնի են:

12. Կացարան ընդունելիս մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին գրանցում են հաշվառման մատյանում, նրան ենթարկում են բժշկական զննման, ըստ անհրաժեշտության՝ նաև սանիտարական մշակման, և տեղափոխում կարանտինային բաժանմունք մինչև 15 օր տևողությամբ: Վարակիչ հիվանդությունների արձանագրման դեպքում կարանտինային բաժանմունքում նախատեսվում է առանձնացված սենյակ՝ մեկուսացման նպատակով:

13. Անձը չի կարող ընդունվել կացարան՝ ներառյալ կարանտինային բաժանմունքում գտնվելուց հետո, եթե ունի Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի N 1286 որոշմամբ հաստատված և շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկը: Այդ դեպքում կազմակերպությունը կամ հաստատությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

14. Կացարանում պետք է լինի իրական հնարավորություն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման յուրաքանչյուր զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին տրամադրել բնակելի առանձին սենյակ, բացառությամբ այն դեպքերի, երբ հակառակի մասին խնդրում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհը կամ հատուկ կատեգորիայի զոհը կամ նրանք հանդիսանում են մերձավոր ազգականներ կամ դա բխում է նրանց անվտանգությունից կամ այլ ցուցումներից: Բնակելի սենյակում չեն կարող միաժամանակ բնակվել չորսից ավելի՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհն իր երեխայի հետ միասին, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հատուկ կատեգորիայի զոհն իր ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի հետ միասին բնակվում են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման այլ զոհերից կամ հատուկ կատեգորիայի զոհերից անջատ, բացառությամբ սույն հավելվածի 10-րդ և 23-րդ կետերով նախատեսված դեպքերի:

15. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին կացարանում հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել ինը քառակուսի մետրից՝ մեկ անձի համար:

16. Կացարանը պետք է ունենա բավարար բնական և արհեստական լուսավորություն և օդափոխություն, լինի մատչելի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի համար, ինչպես նաև բացառի ավելորդ ֆիզիկական անհարմարությունը, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց համար: Կացարանը պետք է մշտապես ապահովված լինի տաք և սառը ջրով:

17. Կացարանում պետք է ապահովվի 18-24 °C ջերմաստիճան, որը կարգավորելու հնարավորություն ունի նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհը կամ հատուկ կատեգորիայի զոհը:

18. Կացարանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին անհատական օգտագործման համար տրամադրվում է՝

1) հագուստի պահարան և մահճակալ.

2) անկողնային պարագաներ և սպիտակեղեն.

3) խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ, սնունդ պատրաստելու սպասք և այլն).

4) հագուստ (անհրաժեշտության դեպքում).

5) անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ և այլն).

6) անհրաժեշտության դեպքում՝ երեխաների խնամքի պարագաներ՝ իր տարիքին համապատասխան.

7) սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ (մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի ցանկության դեպքում սնունդը կարող է պատրաստվել իր կողմից ինքնուրույն, իսկ հատուկ կատեգորիայի զոհը կարող է մասնակցություն ունենալ

սննդի պատրաստման ընթացքին).

8) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի յուրաքանչյուր երեխայի, ինչպես նաև տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ հատուկ կատեգորիայի երեխա զոհի համար մանկական մահճակալ:

19. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհը կամ հատուկ կատեգորիայի զոհը սնունդ, հագուստ, հիգիենայի և այլ պարագաներ ստանում է սույն հավելվածի 3-րդ գլխով նախատեսված չափով և ժամկետով, եթե առավել չափ չի տրամադրում կացարան տրամադրող կազմակերպությունը կամ հաստատությունը:

20. Կացարանը պետք է ապահովված լինի ընդհանուր օգտագործման սեղանով, աթոռներով, բազկաթոռներով, հագուստի կախիչներով, կենցաղային իրերի պահարանով, հեռուստացույցով, սառնարանով, գազօջախով կամ էլեկտրական օջախով, աղբամանով և կենցաղում անհրաժեշտ այլ պարագաներով:

21. Եթե կացարանը երկհարկանի է կամ այնտեղ առկա են երեքից ավելի բնակելի սենյակներ, ապա կացարանում պետք է լինի առնվազն երկու սանհանգույց:

22. Կացարանում առօրյան՝ ներառյալ քնելու և վերկացի ժամերը որոշում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհը կամ հատուկ կատեգորիայի զոհը:

23. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման տարբեր սեռերի զոհերը կամ հատուկ կատեգորիայի զոհերը բնակվում են առանձին կացարաններում կամ կացարանի առանձին մուտք ունեցող բնակելի սենյակներում: Եթե կացարանում առանձին բնակեցնելու հնարավորությունը բացակայում է, ապա մարդկանց թրաֆիքինգի և շահագործման նույն սեռի զոհերի կամ հատուկ կատեգորիայի զոհերի առկայությունը բացառում է հակառակ սեռի զոհերի կամ հատուկ կատեգորիայի զոհերի ընդունումը, բացառությամբ, եթե՝

1) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման տարբեր սեռերի զոհերը կամ հատուկ կատեգորիայի զոհերը մերձավոր ազգականներ են.

2) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհն ընդունվում է իր մինչև 12 տարեկան երեխայի հետ:

24. Եթե կացարանում տրամադրվում են նաև այլ ծառայություններ, դրանց տրամադրումը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ ներառյալ սույն հավելվածում նախատեսված չափորոշիչներին:

3. ԲՆԱՒՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

25. Բնաիրային օգնությունը տրամադրվում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարիքների գնահատման հիման վրա՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն որոշմամբ:

26. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին որպես բնաիրային օգնություն տրամադրվում է սնունդ, հագուստ, կոշիկ, անկողնային և հիգիենայի պարագաներ, երեխաների խնամքի պարագաներ, առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ:

27. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին տրամադրվող սնունդը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սննդի կոնկրետ տեսակին ներկայացվող պահանջներին և լինի պիտանի օգտագործման համար:

28. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին սննդամթերքը տրամադրվում է հետևյալ նվազագույն չափաբաժիններով՝

Սննդամթերքի անվանումը	Չափի միավորը	Մեկ մարդու համար՝ օրական (զտաքաշ)	
		երեխաների	մեծահասակների
1. Հաց և ընդեղեն			
Սպիտակ հաց	գրամ	300	300
II կարգի ալյուրից պատրաստված հաց	գրամ	100	150
Մակարոնեղեն	գրամ	30	40
Ձավարեղեն (հաճար, ձավար, բլղուր, հնդկաձավար)	գրամ	100	150
Լոբեղեն (լոբի, սիսեռ, ոսպ)	գրամ	30	50
2. Կարտոֆիլ և այլ բանջարեղեն			
Կարտոֆիլ	գրամ	300	200
Բանջարեղեն ըստ սեզոնի	գրամ	500	500
3. Մրգեր և հատապտուղներ			
Թարմ մրգեր ըստ սեզոնի	գրամ	250	250
Չորացրած մրգեր	գրամ	20	15
4. Շաքար և հրուշակեղեն			

Շաքար	գրամ	10	10
Մուրաբա, ջեմ	գրամ	15	15
Մեղր	գրամ	20	20
Քաղցրավենիք	գրամ	20	20
5. Կաթ և կաթնամթերք			
Կաթնաշոռ	գրամ	60	30
Կաթ	գրամ	200	200
Մածուն, կեֆիր	գրամ	200	200
Թթվասեր	գրամ	50	40
Պանիր	գրամ	20	20
Կարագ	գրամ	50	50
6. Միս և մսամթերք			
Միս	գրամ	50	100
Թռչնամիս	գրամ	50	100
7. Ձուկ և ձկնամթերք			
Ձուկ, ծովամթերք	գրամ	30	50
8. Ձու			
Ձու	հատ	1	1
9. Բուսական յուղեր			
Բուսական յուղ	գրամ	25	25
10. Ոչ ալկոհոլային խմիչքներ			
Կակաո	գրամ	3	-
Սուրճ		-	3
Թեյ	գրամ	1	2
11. Այլ մթերք			
Տոմատի մածուկ	գրամ	5	5
Խմորիչ	գրամ	1	1
Աղ՝ յոդացված	գրամ	5	5
Համեմունք	գրամ	1	1
Մասուր	գրամ	20	20

29. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհը կամ հատուկ կատեգորիայի զոհը կարող է հրաժարվել կոնկրետ սննդամթերքներից՝ դրա մասին գրավոր հայտնելով բնաիրային օգնություն կամ կացարան տրամադրող կազմակերպությանը կամ հաստատությանը:

30. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին հագուստն ու կոշիկը տրամադրվում են հետևյալ քանակով՝

Հագուստի անվանումները	Չափի միավորը	Քանակը՝ հաշվարկված մեկ անձի համար	Շահագործման ժամկետը (տարի)
Վերնաշապիկ, ներքնաշապիկ	հատ	6	1
Վարտիք	հատ	6	1
Գիշերային հագուստ (ամառ, ձմեռ)	հատ	4	1
Կոշիկ (ամառ, ձմեռ)	զույգ	4	1
Վերնազգեստ	հատ	2	1
Անդրավարտիք	հատ	2	1
Գլխարկ (ամառ, ձմեռ)	հատ	1	1
Ձուգագուլպա, գուլպա (ամառ, ձմեռ)	զույգ	8	1
Հողաթափեր և ռետինե հողաթափեր	զույգ	4	1
Բաճկոն	հատ	1	1

31. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին սույն հավելվածի 30-րդ կետով նախատեսված հագուստը տրամադրվում է հաշվի առնելով նրանց սեռը, տարիքը, հնարավորինս՝ նախասիրությունները, և բացառելով ալերգիկ կամ այլ բացասական հնարավոր հետևանքները:

32. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին անկողնային և հիգիենայի պարագաները տրամադրվում են հետևյալ քանակով՝

Անկողնային և հիգիենայի պարագաների անվանումները	Չափի միավորը	Քանակը՝ հաշվարկված մեկ մահճակալի կամ անձի համար	Շահագործման ժամկետը
1. Անկողնային պարագաներ			
Սավան	հատ	3	1 տարի
Անջրանցիկ սավան	հատ	2	1 տարի
Վերմակասավան	հատ	3	1 տարի
Բարձի երես (վերին)	հատ	3	1 տարի
Ներքնակի երես	հատ	2	1 տարի
Սրբիչ	հատ	4	1 տարի
Ներքնակ	հատ	1	1 տարի
Բարձ	հատ	1	1 տարի
Տաք վերմակ	հատ	1	1 տարի
Ամառային վերմակ	հատ	1	1 տարի
2. Հիգիենայի պարագաներ			
Օճառ՝ ձեռքի	գրամ	400	1 ամիս
Շամպուն	միլիլիտր	400	1 ամիս
Լվացքի փոշի	գրամ	400	1 ամիս
Սպասք լվանալու նյութեր	գրամ	300	1 ամիս
Ատամի մածուկ	հատ	1	1 ամիս
Ատամի խոզանակ	հատ	1	2 ամիս
Զուգարանի թուղթ	հատ	3	1 ամիս
Մեկանգամյա օգտագործման սափրող սարք	հատ	1	2 ամիս
Սանր	հատ	1	3 ամիս
Կնոջ հիգիենիկ պարագա	հատ	12	1 ամիս

33. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի խնամքի տակ գտնվող երեխայի կամ հատուկ կատեգորիայի երեխա զոհի խնամքի պարագաները, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի համար առաջին անհրաժեշտության այլ ապրանքները տրամադրվում են ըստ պահանջի՝ հաշվի առնելով նրանց կարիքները:

4. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

34. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին հոգեբանական օգնություն կարող է տրամադրել հոգեբանի բակալավրի, մագիստրոսի կամ մասնագետի կրթություն ունեցող այն անձը, ով ունի հոգեբանի աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ, և պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կամ միջազգային կամ հասարակական կազմակերպությունների կողմից վերապատրաստվել է հանցագործությունից տուժած անձանց կամ բռնության՝ ներառյալ ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու համար: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հատուկ կատեգորիայի երեխա զոհին հոգեբանական օգնություն տրամադրում է սույն կետով նախատեսված պահանջներին համապատասխանող մանկական հոգեբանը:

35. Հոգեբանական օգնությունը տրամադրվում է անձի՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետևանքով առաջացած անկայուն հոգեբանական վիճակը վերականգնելու, սթրեսը հաղթահարելու, սոցիալական կապերը և ընտանիքի հետ հարաբերությունները վերահաստատելու, կարողություններն ամրապնդելու, անկախության և ինքնաբավության համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու և անձին վերասոցիալականացնելու համար:

36. Հոգեբանական օգնությունը տրամադրվում է անհատական վերականգնողական ծրագրերի միջոցով: Հոգեբանը

վերականգնողական ծրագիրը վերանայում է պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ:

37. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին հոգեբանական օգնություն տրամադրելու նպատակով հոգեբանը գնահատում է անձի հոգեբանական վիճակը, մշակում և պարբերաբար վերանայում է անհատական վերականգնողական ծրագիրը՝ ներառելով անձի համար անհրաժեշտ միջոցառումներ, և իրականացնում այն:

38. Հոգեբանական օգնություն տրամադրվում է հետևյալ եղանակներով՝

1) սոցիալ-հոգեբանական ծառայություններ.

2) հոգեբանական ախտորոշում և անձի ուսումնասիրություն.

3) սոցիալ-հոգեբանական պատրոնաժ (պարբերական դիտարկում).

4) հոգեկանխարգելիչ աշխատանք.

5) հոգեբանական խորհրդատվություն.

6) ճգնաժամային հոգեբանական օգնություն.

7) հոգեբանական շտկում.

8) հոգեբանական պատրաստումներ, քննարկումներ և զրույցներ՝ ներառյալ խմբային:

39. Սույն հավելվածի 38-րդ կետում նշված օգնության կոնկրետ եղանակը կամ դրանց համակցությունը որոշում է հոգեբանը՝ հոգեբանական վերականգնման ծրագրի շրջանակներում:

5. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

40. Խորհրդատվական օգնությունը տրամադրվում է տարբեր ոլորտների մասնագետների կողմից՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետևանքով ստեղծված իրավիճակից դուրս գալու, սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների, հասարակությանը սոցիալական վերաինտեգրմանն ուղղված խորհուրդների և առաջարկությունների, ինչպես նաև համարժեք աջակցություն ստանալու համար:

41. Խորհրդատվական օգնությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին ուղղորդելն է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, միջազգային կամ հասարակական կազմակերպություններ՝ սույն հավելվածի 40-րդ կետում նշված նպատակների համար, ինչպես նաև կացարանում գտնվելիս կամ խնամք տրամադրելիս կազմակերպության կամ հաստատության մասնագետների կողմից տեղեկատվություն տրամադրելը, իսկ, անհրաժեշտության դեպքում, նաև համապատասխան մարմիններ և կազմակերպություններ համատեղ այցելելը:

42. Հոգեբանական և իրավաբանական խորհրդատվությունը տրամադրվում է սույն հավելվածի 4-րդ և 6-րդ գլուխների պայմաններին համապատասխան:

43. Խորհրդատվական օգնություն տրամադրող մասնագետը պատասխանատու է տրամադրվող տեղեկատվության ամբողջական, ճշգրիտ, նպատակային և կիրառելի լինելու համար: Անհրաժեշտության դեպքում, տրամադրվում են խորհրդատվական բուկլետներ՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին հասկանալի լեզվով:

44. Խորհրդատվական օգնությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հատուկ կատեգորիայի զոհին տրամադրվում է նրա օրինական ներկայացուցչի հետ միասին, եթե դա չի հակասում հատուկ կատեգորիայի երեխա զոհի լավագույն շահին:

6. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

45. Իրավաբանական օգնությունը կարող է տրամադրել իրավաբանի բակալավրի, մագիստրոսի կամ մասնագետի կրթություն ունեցող այն անձը, ով ունի փաստաբանական գործունեության արտոնագիր կամ իրավաբանի աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ և պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կամ միջազգային կամ հասարակական կազմակերպությունների կողմից վերապատրաստվել է հանցագործությունից տուժած անձանց կամ բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքներ իրականացնելու համար: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հատուկ կատեգորիայի երեխա զոհին իրավաբանական օգնություն տրամադրվում է օրինական ներկայացուցչի միջոցով, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահին:

46. Իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվություն՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում՝ ներառյալ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) ներկայացուցչություն կամ պաշտպանություն՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով.

3) այլ աջակցություն՝ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, փաստաթղթերի վերականգնման կամ դրանց բացակայության դեպքում դրանք ձեռքբերման համար:

47. Սույն հավելվածի 46-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել միայն փաստաբանի կողմից:

7. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

48. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի խնամքը՝ նրանց ընտանիքում (հարազատ սոցիալական միջավայրում) կամ կացարանում՝ առօրյային առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններում, պահելու և հասարակությունում ներառելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

49. Եթե խնամքը տրամադրվում է կազմակերպության կամ հաստատության կացարանում, ապա այն տրամադրվում է սույն հավելվածի 2-6-րդ գլուխներով, իսկ եթե մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի ընտանիքում (հարազատ սոցիալական միջավայրում)՝ 3-6-րդ գլուխներով նախատեսված պայմանների ապահովմամբ:

50. Խնամք տրամադրելիս հավելյալ կարող են տրամադրվել աջակցություն կրթության ստացմանը, ժամանցի կազմակերպմանը, բժշկական օգնության և սպասարկման տրամադրմանը, ինչն ապահովվում է համապատասխան մարմինների և հիմնարկների հետ համագործակցության միջոցով:

51. Խնամքի տրամադրումը, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, կարող է իրականացվել միայն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության դեպքում:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

52. Սույն հավելվածով նախատեսված՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, որակի նվազագույն չափորոշիչների ապահովման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

53. Եթե ծառայությունը կամ օգնությունը տրամադրվում է կազմակերպության կամ հաստատության կողմից, ապա սույն հավելվածով նախատեսված՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, որակի նվազագույն չափորոշիչների ապահովման նկատմամբ մշտադիտարկումը, ինչպես նաև վերահսկողությունն իրականացվում է նաև այդ կազմակերպության կամ հաստատության ղեկավարության կողմից:

54. Ծառայություններ կամ օգնություն տրամադրող կազմակերպության կամ հաստատության ղեկավարության կողմից մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի հետ տարվող անհատական աշխատանքի մշտադիտարկումը՝ որպես ծառայությունների արդյունավետության ստուգման ձև, սահմանվում է սույն հավելվածի N 1 ձևով: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի և հատուկ կատեգորիայի զոհի հետ տարվող անհատական աշխատանքի մշտադիտարկումն իրականացվում է առնվազն ամիսը մեկ անգամ:

55. Սույն հավելվածով նախատեսված նվազագույն չափորոշիչները չապահովելը կամ մասնակիորեն ապահովելը կարող է հանգեցնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին համապատասխան հաստատություն և կազմակերպություն չուղղորդելուն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին ծառայություններ մատուցելու իրավահարաբերությունների դադարեցմանը:

56. Սույն հավելվածով նախատեսված ծառայություններ կամ օգնություն տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմած կազմակերպությունը կամ հաստատությունը պարտավոր է ներկայացնել սույն հավելվածով նախատեսված պահանջների համապատասխանելիությունը փաստող կամ հիմնավորող փաստաթղթեր՝ ներառյալ մասնագետներին ներկայացվող պահանջները:

57. Եթե կազմակերպության կամ հաստատության գործունեության ընթացքում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, որոնք չեն համապատասխանում սույն հավելվածով նախատեսված պահանջներին, ապա կազմակերպության կամ հաստատության ղեկավարությունը ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

58. Եթե սույն հավելվածի 57-րդ կետում նախատեսված տեղեկատվությունը փոխանցելուց հետո, սույն հավելվածով նախատեսված պահանջներին անհամապատասխանությունը չի վերացվում 10 աշխատանքային օրվա ընթացքում, ապա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին ծառայություններ մատուցելու իրավահարաբերությունները դադարում են:

Ձև N 1

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԻ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀԻ ՀԵՏ

ՏԱՐՎՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի անունը, ազգանունը և հայրանունը_____
_____

Ծննդյան ամսաթիվ _____

_____ ից _____ -ը նախատեսված անհատական աշխատանքի մշտադիտարկում

N N ը/կ	Նշումներ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի վիճակի մասին		Անհատական աշխատանքի շտկման մասին որոշում (նշել վերանայման կարիք ունեցող ծառայությունը)	Վերանայման կարիքը	Վերանայում իրականացնող մասնագետի անունը, ազգանունը, հայրանունը և ստորագրությունը
	առկա են դրական փոփոխություններ (մանրամասն նկարագրել[1])	փոփոխությունները բացակայում են կամ առկա են բացասական փոփոխություններ (նշել պատճառները)			
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					

Հատուկ կարծիք և դիտարկումներ _____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Մասնագետ _____
(Ա.Ա.Հ, ստորագրություն, ամսաթիվ)

Ղեկավար _____
(Ա.Ա.Հ, ստորագրություն, ամսաթիվ)

---

[1] Դրական փոփոխությունները ներկայացվում են ըստ ոլորտների՝
- մարմնական, հոգեկան, հուզական վիճակ,
- խոսքային, ճանաչողական, զգայական շարժողական ոլորտ,
- շփումների ոլորտ,
- ինքնասպասարկման ոլորտ,
- սոցիալ-կենցաղային և աշխատանքային հարմարեցման և սոցիալիզացիայի ոլորտ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար Ա. Հարությունյան

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 6 հոկտեմբերի 2022 թվական: